

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԳՈՒՄԳԱԲԸ - ՍՏԱՆԴՈՒԼ



ARMENIAN PATRIARCHATE

TR - 34480 KUMKAPI - ISTANBUL

Tel. : (90-1) 517 0970 or 71

Fax : (90-1) 516 4833

ԶԵԿՈՅՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՈՒԳ ՄԻՆՉԵՒ ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

1. Պատրիարքական Լիազոր Ընդհանուր Փոխանորդ Բարձրաշնորհ Տեր Մեսրոպ Արքեպիսկոպոս Մուրաֆեանի տնօրինութեամբ Երջանկայիշատակ Գարեգին Բ Շնորհազարդ Պատրիարքի վախճանման առթիւ Պատրիարքական Աթոռոյս սահմաններէն ներս, ազգային-եկեղեցական սուգ կը հրահանգուի մինչեւ Սուրբ Զատիկի Ճրագալոյցի Ս. Պատարագը:

2. Յառաջիկայ սուգի շրջանին մեր եկեղեցական, բաղային, համայնքային, միութեանական բոլոր կազմակերպութիւններէն ներս սոյն յայտարարութեամբ ջնջուած կամ յետաձգուած կը համարուին ոչ-կրօնական բնոյթ կրող ձեռնարկները, բացի բնականաբար հոգեւոր ուխտագնացութիւնները, կրօնա-եկեղեցական եւ համայնքային բնոյթ կրող անհրաժեշտ ժողովները, միշտ ընկալեալ պատշաճութեան տսհմաններուն մէջ:

3. Մինչեւ յառաջիկայ Կիրակի, առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւններու ընթացքին մեր եկեղեցիներու զանգակները կը դօղանջեն սուգի կշռոյթով հինգ վայրկեան տևողութեամբ:

4. Մինչեւ սուգի շրջանի աւարտը անխափր բոլոր Ս. Պատարագներու աւարտին կը կատարուի յատուկ կարգ ի հանգիստ հոգւոյ Երջանկայիշատակ Պատրիարքին:

5. 11 Մարտ Զորեքշաբթիէն սկսեալ մինչեւ 14 Մարտ Եարաք Կիրակամուտի աւարտին ժամը 14.00-18.00-ի միջեւ Պատրիարքարանիս Դահլիճին մէջ կ'ընդունուին ցաւակցութիւնները եւ կը բացուի սուգի տոմար, որում մէջ պաշտօնական մարմիններ եւ կամ բարեպաշտ հասարակութենէն անհատներ կրնան ստորագրել: Պատրիարքարան այցելողներէն կ'ակնկալուի կրել սուգի պատշաճ մուգ զգեստ:

6. 11 Մարտ Զորեքշաբթիէն սկսեալ ժամը 14.00-18.00-ի միջեւ բարեպաշտ հասարակութիւնը կրնայ վերջին յարգանքի սուրբը մատուցանել եւ Սուրբ Աջը համբուրել Երջանկայիշատակ Պատրիարք Հօր, որու անկեղծաբան մարմինը պատուանդանի վրայ կը դրուի Սուրբ Աստուածածին Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ: